# Դաս 43. Ռազմական գործիչ

**Հալիձորի ճակատամարտը**

*Մեր պատմության մեջ քիչ չեն եղել փառավոր ճակատամարտերը, երբ հայոց զորքը փայլել է իր պանծալի հաղթանակներով, որոնք հաճախ տարել է թվաքանակով մի քանի անգամ գերակշռող թշնամական բանակների դեմ:*

*Այդ ճակատամարտերից մեկը տեղի է ունեցել Հալիձորում՝ 1727 թ.: Օսմանյան զորքերը փոքրաթիվ հայկական ուժերին պաշարել էին Հալիձորի ամրոցում: Մխիթար սպարապետն ու տեր Ավետիսը, դիմելով նրանց, ասում են. «Արիացե՛ք, մի՛ երկնչեք, հետևեցե՛ք մեզ. եթե հասել է մեր վախճանը, քաջաբար մեռնենք, որովհետև մեզ համար ավելի լավ է արիությամբ պարիսպներից դուրս մեռնել, քան այստեղ մեր աչքերի առաջ տեսնել մեր ընտանիքների ու բարեկամների մահը»: Եվ Սյունիքի հայ ազատագրական շարժման քաջ մարտիկները՝ ընդամենը 300 հոգի, Դավիթ-Բեկի գլխավորությամբ՝ կայծակնաբար դուրս են սուրում ամրոցից և ահ ու սարսափ սփռում հակառակորդի զորքի մեջ: Նրանց հարձակման թափը, ահեղ աղմուկը, անկասելի ու վճռական հարվածները խելագարության են հասցնում թշնամուն, և նա ափիպված փախուստի է դիմում՝ տալով խայտառակ թվով՝ 13 հազար զոհ:*



Դավիթ-Բեկի արձանը Կապանում